# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն – 20

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՆԻՍՏԻ**

***ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ***
***ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ***
***ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ***
***ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ***

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Ա. Մարկոսյանը, Ա. Բաղդասարյանը, Գ. Արշակյանը, Մ. Դատումյանը, Ա. Դատումյանը, Տ. Հակոբյանը, Ռ. Տոնոյանը, Տ. Գալստյանը, Ժ. Ավետիսյանը, Բ. Հարությունյանը, Ա. Հունանյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Բ. Վարդանյանը, Գ. Սուքիասյանը, Ս. Օվոյանը, Կ. Առաքելյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Շմավոնյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալներ Ա. Ներսիսյանն ու Վ. Սաֆարյանը, մամուլի քարտուղար Ս. Ասիլյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Հ. Բաղդասարյանը, համայնքի ղեկավարի օգնական Ն. Գևորգյանը, աշխատակազմի բաժինների պետեր:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը**

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2023-2025թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:
*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*
3. Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*
4. <<Աշտարակի խմելու ջրի մատակարարման և սպասարկման>> և <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

5. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 18.12.2012թ. N 6-Ն և 01.02.2022թ. N 6-Ա որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

6. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

7. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 11.05.2022թ. N 66-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

8. Համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվություն կատարելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Թումասյան/*

9. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Թումասյան/*

10. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Թումասյան/*

11. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Թումասյան/*

12. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Թումասյան/*

13. Աշտարակ համայնքի Բյուրական գյուղում 2021-22թթ. կառուցված համայնքային սեփականություն հանդիսացող գազատարի հատվածներն անհատույց օգտագործման իրավունքով <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ին շահագործման հանձնելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Թումասյան/*

14. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծման առաջադրանքը հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Թումասյան/*

15. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Թումասյան/*

16. Ծառահատում կատարելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Մխիթարյան/*

17. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի առաջին նիստի օրը սահմանելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*Լ Ս Ե Ց Ի Ն - 2* - *Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2023-2025թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին*

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի պահանջներով, հաստատել Աշտարակ համայնքի 2023-2025թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը /ՄԺԾԾ/՝ համաձայն հավելվածների:

Զեկուցողը մասնավորապես նշեց, որ նշված որոշման նախագիծը հանդիսանում է օրենսդրական պահանջ:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*Լ Ս Ե Ց Ի Ն – 3* - *Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նվազագույն աշխատավարձի մասին>>, <<Կուտակային կենսաթոշակների մասին>> օրենքների պահանջներով, հաստատել Աշտարակի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը /կցվում է հավելված՝ 1-37/: ՀՈԱԿ-ներում 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված աշխատողների համար նվազագույն աշխատավարձ սահմանել 104698 ՀՀ դրամ: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի և Ս. Սահակյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ**

*Լ Ս Ե Ց Ի Ն – 4* - *<<Աշտարակի խմելու ջրի մատակարարման և սպասարկման>> և <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջներով, հաստատել <<Աշտարակի խմելու ջրի մատակարարման և սպասարկման>> համայնքային հիմնարկի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի: Հաստատել <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*Լ Ս Ե Ց Ի Ն – 5* - *Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 18.12.2012թ. N 6-Ն և 01.02.2022թ. N 6-Ա որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, Աշտարակ համայնքի ավագանու 18.12.2012թ. N6-Ն որոշմամբ հաստատված <<Բարեկարգում>> ՀՈԱԿ-ի կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ: Աշտարակ համայնքի ավագանու 01.02.2022թ. N 6-Ա որոշման հավելված 29-ը շարադրել նոր խմբագրությամբ: <<Բարեկարգում>> ՀՈԱԿ-ի կանոնադրությունը ներկայացնել ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն գրանցում կատարելու համար:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*Լ Ս Ե Ց Ի Ն – 6* - *Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33, 34 հոդվածների պահանջներով.

1.Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման Հավելված 1-ի մեջ կատարել փոփոխություն՝

<<5. Տրանսպորտի, կոմունալ տնտեսության և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժին>> բառերը փոխարինել <<5. Տրանսպորտի, կոմունալ տնտեսության, առևտրի, գովազդի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժին>> բառերով:

2.Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման Հավելված 2-ի մեջ կատարել որոշման նախագծով նախատեսված փոփոխությունները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*Լ Ս Ե Ց Ի Ն – 7* - *Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 11.05.2022թ. N 66-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33, 34 հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանու 11.05.2022թ. N 66-Ա որոշման 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

<<2. Աշտարակի համայնքապետարանի և Արմեն Կարոյի Արշակյանի միջև կնքել վարձակալության պայմանագիր՝ 2 տարի ժամկետով>>:

Զեկուցողը նշեց, որ հարցը վերաբերվում է համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկային:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**21 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Կ. Առաքելյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - Համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվություն կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Սոս Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Բենյամին Ավագյանի 30.11.2022թ. N 6151 դիմումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ ՀՀ Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի Օշական գյուղի Մ. Մաշտոցի փողոցի 4 շենքի N 19 հասցեում գտնվող/կադաստրային ծածկագիր՝ 02-113-0004-0014/, համայնքային սեփականություն հանդիսացող 45քմ մակերեսով բնակարանը, բազմաբնակարան բնակելի շենքի զբաղեցրած 0,06503հա հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների նկատմամբ սեփականության իրավունքի համայնքի բաժնեմասը Գրետա Վախթանգի Սողոմոնյանին, Բենյամին Գևորգի և Աշոտ Բենյամինի Ավագյաններին նվիրատվություն կատարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*Լ Ս Ե Ց Ի Ն – 9 - Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Սոս Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացիների հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին դիմումները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն, 29.12.2011թ. N 1920-Ն որոշումների պահանջներով, համաձայնություն տալ հողամասերի գործառնական նշանակության փոփոխելու վերաբերյալ առաջարկությանը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*Լ Ս Ե Ց Ի Ն – 10* - *Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Սոս Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացիների և իրավաբանական անձանց գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հավանություն տալ Աշտարակ համայնքի տարածքում գտնվող քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների /սառնարանային պահպանության տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*Լ Ս Ե Ց Ի Ն – 11* - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Սոս Թումասյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համաձայնություն տալ.

1.Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերի նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի:

2. Համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ - վաճառքով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*Լ Ս Ե Ց Ի Ն – 12 - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին*

Հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Սոս Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Արայիկ Կարապետյանի 19.10.2022թ. N 5217 դիմումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ և 66-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշման, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի Ուշի բնակավայրում գտնվող, 02-108-0044-0016 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 0,06958հա գյուղատնտեսական նշանակության հողամասը /արոտավայր/ ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքով/ օտարել կից ընդլայնվող 02-108-0247-0210 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի սեփականատեր Արայիկ Ռազմիկի Կարապետյանին:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*Լ Ս Ե Ց Ի Ն – 13 - Աշտարակ համայնքի Բյուրական գյուղում 2021-22թթ. կառուցված համայնքային սեփականություն հանդիսացող գազատարի հատվածներն անհատույց օգտագործման իրավունքով <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ին շահագործման հանձնելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Սոս Թումասյանը և առաջարկեց Աշտարակ համայնքի Բյուրական գյուղում 2021-22թթ. կառուցված գազատարի հատվածների շահագործումն իրականացնելու նպատակով, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ՝ համայնքային սեփականություն հանդիսացող Բյուրական գյուղում

2021-22թթ. կառուցված d=57x3 մմ, L= 508,4գ/մ (անշարժ գույքի սեփականության իրավունքի N 17112022-02-0041 վկայականով) գազատարն անհատույց օգտագործման իրավունքով, շահագործման նպատակով <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ին հանձնելու և համապատասխան պայմանագիր կնքելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*Լ Ս Ե Ց Ի Ն – 14* - *ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծման առաջադրանքը հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Սոս Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 22.12.2009թ. N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N4/Ա-7 եզրակացությունը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 31 կետի և ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման պահանջներով, հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծման առաջադրանքը:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*Լ Ս Ե Ց Ի Ն – 15* - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Սոս Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Ծաղկանուշ Կարապետյանի 08.08.2022թ. N 3806 դիմումը, համայնքի ղեկավարի առաջարկությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1] հոդվածի, ՀՀ կառավարության 12.04.2001թ. N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1 կետի 21-րդ ենթակետի դրույթներով, թույլատրել Աշտարակ քաղաքի Տիգրան Մեծի փողոց,

N 38 շենքի հարևանությամբ գտնվող, 02-001-0130-0001 ծածկագրից 19,98քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ Ծաղկանուշ Սամվելի Կարապետյանին տրամադրելու մինչև 06.10.2041թ.՝ տարեկան 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ վճարով:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*Լ Ս Ե Ց Ի Ն – 16* - *Ծառահատում կատարելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Սարգիս Մխիթարյանը և առաջարկեց, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի եզրակացությունը, ղեկավարելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 15-րդ կետի, 51-րդ հոդվածի 1-ին կետի և 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Երևան-Աշտարակ մայրուղու Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող, երթևեկության համար խոչընդոտ հանդիսացող՝ փտած և արմատային համակարգը ախտահարված ծառերը կտրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*Լ Ս Ե Ց Ի Ն – 17* - *Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի առաջին նիստի օրը սահմանելու մասին*

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի առաջին նիստի օրը և ժամը սահմանել 2023 թվականի փետրվարի 14-ը, ժամը 17:00-ին: Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7:

**22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2022 թվականի դեկտեմբերի 9-ին:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

| | |
|---|---|
| ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | _____ |
| ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ | _____ |
| ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ | _____ |
| ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | _____ |
| ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ | _____ |
| ՄԵՐԻ ԴԱՏՈՒՄՅԱՆ | _____ |
| ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ | _____ |
| ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ | _____ |
| ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ | _____ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | _____ |
| ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ | _____ |
| ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | _____ |
| ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ | _____ |
| ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ | _____ |
| ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ | _____ |
| ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ | _____ |
| ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ | _____ |
| ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ | _____ |
| ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ | _____ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | _____ |
| ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ | _____ |
| ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ | _____ |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն**

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ